

ներու կարգն անցած պիտի ըլլային պատմութեան մէջ՝ եթէ Վենետիկոյ Միթարեան Հայրերը սերունդէ սերունդ չփոխանցէին այդ սրբազան աւանդները։ Անոնք իրագործելու համար սոյն Բարերարաց կրթական ծրագիրները՝ նախ երկարաշատ տարիներ նիւթական ու բարոյական անլուր տառապանքներ կրեցին. ի սէր ազգին զոհեցին իրենց առողջութիւնը՝ մինչեւ իսկ կեանքի վտանգով։ Եւ յետ ձերբազատելու հրիտակը, յետ կանգնելու Վարժարանները՝ մէն մի դաստիարակ Հայր ամբողջ դարու մ'ընթացքին մրցակցեցաւ կարծես ժառանգելու իր նախորդին անձնանութիւնը, ազգասիրութիւնը. տրամադրեց իր ուսումնական ձիրքն ու փորձառութիւնը, գործածեց իր բոլոր կարողութիւնները՝ հայ անուան արժանաւոր սերունդներ պատրաստելու։

Միթարեան այդ կարգի վաստակաւորներուն մէջ, արդար է ըսել, որ անդրանկութեան իրաւունքը կը պատկանի զոյգ յոգնաջան Հայրերու՝ որոնք են Հ. Նիկողայոս Բուզայեան (ծն. 1739 թ. 1803) և Հ. Պօղոս Մէհէրեան (ծն. 1729 թ. 1814). ասոնք եղան սկզբնապատճառ երկու կտակներու կազմութեան, և ի յաջողութիւն իրին՝ անձնագոհ և աննահանջ ամէն տեսակ տառապանքներու զիմաց՝ ճգնեցան հասնիլ իրենց նպատակին, այն է՝ ապահովել զրամագլուխ ի դաստիարակութիւն հայ մանկուոյն։

Հ. Սարգիս Թէոդորեան կ'ամփոփէ Բուզայեանի գործը այսպէս. «Փոխանակ հինգամեայ պարտուց խնամածութեան պաշտաման Հ. Նիկողայոսի՝ ի Լոնտոն, զամս քսան վարէ նա զայն անդ, սկսեալ ի 1785 ամէն մինչեւ ցամա 1805, յորում ամի վախճանի նա ի Լոնտոն, և թաղի յանկեան ինչ, ի պարտիդի ուրեք Հոովմէական Անգղիացւոյ»։ («Պատմ. Մարտական Վարժ.», Հտ. Ա. էջ 46)։

Հարկ է ճշգրտմ մ'ընել յիշեալ մէջբերումէս, որ ըստ վանական տոմարի՝ Հ. Բուզայեան վախճանած է ոչ թէ 1805-ին, այլ 1803-ին։ Սոյն թուականին հետ պիտի հանդիպինք նաեւ ուշագրաւ նոր յայտնութեան մը, զոր կ'ընծեոէ մեզ Հ. Յարութիւն Աւգերեանի անտիպ ինքնակենսագրութիւնը. (այսպէս Միթարեան Գաստիարակներու մեր ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐԻՆ մէջ առաւելապէս պիտի լսուի հետզհետէ բազմաթիւ զիւանական վաւերաթղթերու ձայնը, ըստ կարելոյն ցուցադրելու համար բուն իսկ իրականութիւնը, ճշմարտութիւնը)։

Արդ, Թէոդորեան՝ Բուզայեանի մահը ակնարկելէ վերջն ըսաւ. «Թաղի յանկեան ինչ, ի պարտիդի ուրեք Հոովմէական Անգղիացւոյ» (տե՛ս Անդ)։ Այդ մասին որոշ յիշատակութիւն մը ահա. Հ. Յար. Աւգերեան առաջին անգամ երբ Լոնտրա կ'երթայ առ Պարոն Աղեքսանդր Ռափայէլ, նուիրական պարտք մը կը սեպէ այցելել այդ առթիւ նաեւ Հ. Նիկ. Բուզայեանի գերեզմանին, որ կը գտնուի, կ'ըսէ, Նորաղանդներու St. Pancras եկեղեցւոյն մէջ, ուսկից հող եւս առնելով կը բերէ միասին ի Ս. Ղազար՝ ի յիշատակ բազմաթղիւն Հօր։ Ինչ որ մեզ աւելի հետաքրքրական է՝ անոր առանձին մահաբձանին գոյութիւնն է այդ թուականին. ան կը գրէ այսպէս. «Մահաբձան նորա առ սնարիւքն ունէր զայս Տապանագիր ի լատին բարբառ. «† Hic jacet corpus Rev. di Patris Nicolai Pusani Monaci Ordinis Sancti Antonii Abbatis Natione Armeni olim coenobii Sancti Lazari Venetiis Alumni. — Obiit 30. Maji 1803. — Etatis 66. — Requiescat in Pace»։ այսինքն է՝ «Հոս կը հանգչի մարմինը Մեծարգոյ Հ. Նիկողայոս Բուզայեանի՝ միանձն ի կարգէ Ս. Անտոն Աբբայի, հայազգի, երբեմն Աշակերտ Վենետիկոյ Ս. Ղազարու մենաստանին։ Վախճանեցաւ 30 Մայիս 1803, 66 տարեկան — Հանգիցէ ի խաղաղութեան»։ («Կենցաղ Հ. Յարութիւն Վարդապետի Աւգերեան», էջ 137)։

Գալով Հ. Պօղոս Մէհէրեանի՝ «յետ հինգամեայ նեղութեան և անձկութեան իւրոյ անդ» (Թէոդորեան. «Պատմ. Մ. Վ.», էջ 43) 1790-ին ճամբայ կ'ելլէ Մատրասէն դէպի Լոնտրա, բայց ըստ Բուզայեանի խորհուրդին վանք կը մեկնի, ուր և ինքը